Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-Ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988–1989 թթ.) (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), *Երևան, Պատմության ինստիտուտ, 2014, 258 էջ:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակվող «Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան» մատենաշարով տպագրվել է «Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988–1989 թթ.)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որը կազմել են պ. գ. դ., պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը և պ. գ. դ., դոցենտ Կարեն Խաչատրյանը, խմբագիրը Կարեն Խաչատրյանն է: Ժողովածուում առանձնացվել և ընդգրկվել են փաստաթղթեր և նյութեր Հայաստանի ազգային ու ԼՂՀ-ի պետական արխիվներից և ժամանակի մամուլի հրապարակումներից: Փաստաթղթերը ներկայացված են ժամանակագրական կարգով և բնագրի լեզվով, դրանցում կատարվել են ուղղագրական և ոճային բնույթի որոշ սրբագրումներ, մասնակի կրճատումներ, տրված են ծանոթագրություններ:

Ժողովածուն նվիրված է Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշման 25-ամյակին: Ժողովածուն լրացնում և ամբողջացնում է կազմողների կողմից 2011 թ. հրատարակված «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (գրքի մասին գրախոսությունը տե՛ս ՊԲՀ, 2012, -3, էջ 217–219):

Ժողովածուում զետեղված փաստաթղթերում և նյութերում պահանջ է դրվում՝ հարգել ազգերի ինքնորոշման իրավունքը, ԼՂԻՄ-ը դուրս բերել Խորհրդային Ադրբեջանի կազմից և վերամիավորել Խորհրդային Հայաստանի հետ: Հայկական կողմը հիմնավորում է իր պահանջների ու պնդումների ճշմարտացիությունը՝ վկայակոչելով նաև լենինյան-խորհրդային սկզբունքները: Խնդրի հետ կապված դիպուկ օրինակ է բերվել և տեղին համեմատություն արվել «Երազ» գործարանի աշխատա-

կազմի՝ Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա. Ա. Գրոմիկոյին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ա. Ոսկանյանին ուղղված դիմումի մեջ. «Ով կտա իր երեխային հարևաններին, ինչքան էլ բարիդրացիական զգացմունքներ նրանց չկապեն» (էջ 66):

Հրապարակված փաստաթղթերում ու նյութերում ներկայացված են ԼՂԻՄ-ի, արցախահայության անցյալ ու ներկա վիճակը և արցախյան հիմնահարցի պատմությունը՝ հայության պահանջների յուրօրինակ հիմնավորումներ: Դրանք հատկապես հանգամանալից ներկայացված են Հայկական ԽՍՀ ԳԱ՝ «Լեռնային Ղարաբաղի մասին» դիմումի (էջ 49–53), Հայկական ԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աշխատակիցների՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանին ուղղված գրության (էջ 210–214) և Լեռնային Ղարաբաղի հասարակության անունից՝ ԽՄԿԿ կենտկոմին և ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին ուղղված հայտարարության մեջ (էջ 72–75): Վերջինում նշված է, որ Լեռնային Ղարաբաղի քաղաքական դրությունը աննախադեպ է խորհրդային իրականության մեջ: Սա ազգի՝ կողքին իր միութենական հանրապետությունն ու իր ազգային, աշխարհագրական անվանումն ունեցող միակ ազգային-տարածքային-վարչական կազմավորումն է (էջ 74): Ներկայացվում է նաև մեր հայրենակիցների վիճակը Ադրբեջանի որոշ բնակավայրերում, շարադրված են ԼՂԻՄ-ի հայ բնակչության՝ նման վիճակի պատճառները:

Փաստաթղթերում ու նյութերում բացահայտվում են Ադրբեջանում և ԼՂԻՄ-ում բնակվող մեր հայրենակիցների նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների վարած քաղաքականությունը, դրա մեթոդներն ու նպատակները, ազերիների կատարած վայրագությունները, նրանց վերաբերմունքը հայկական պատմամշակութային հուշարձանների նկատմամբ: Բնականաբար, դժգոհություն և ըմբոստություն է հայտնվում ադրբեջանական իշխանությունների ու ադրբեջանցիների՝ նման քաղաքականության ու պահվածքի դեմ:

Ժողովածուում տեղ գտած փաստաթղթերում և նյութերում ներկայացվում է հիմնախնդրի պատմությունը, համառոտ շարադրվում է Ղարաբաղն ու Նախիջևանը Մայր հայրենիքից վերցնելու և նորաթուխ Ադրբեջան պետությանը հանձնելու պատմությունը: Կա նաև համառոտ անդրադարձ Արցախի պատմությանը:

Կենտրոնական և հանրապետական իշխանություններին ուղղված կոչերում և դիմումներում կարծիքներ և առաջարկություններ են արվում հիմ-

նախնդրի արդարացի լուծման վերաբերյալ, նախանշվում լուծման ուղիները: Հետաքրքիր առաջարկությամբ են հանդես եկել Կիրովականի (ներկայիս Վանաձոր) «Պոլիմերսոսինձ» գիտաարտադրական միավորման աշխատավորները՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին ուղղված պահանջագրում. նրանց կարծիքով՝ ստեղծված դրության մեջ անցանկալի միջադեպերի կանխման համար անհարժեշտ է, որ Լեռնային Ղարաբաղի մարզի իրական պատմության լուսաբանմամբ կենտրոնական մամուլում, հեռուստատեսությամբ և ռադիոյով հանդես գան իրազեկ մարդիկ, գիտնականներ, արվեստի աշխատողներ, աշխատանքի և Հայրենական պատերազմի վետերաններ (էջ 46):

Ուշագրավ է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի աշխատակազմի ընդհանուր ժողովի ընդունած բանաձևը. աշխատակազմը հանձն է առնում Լեռնային Ղարաբաղում իրականացվելիք մասնագիտական գործունեության լայն ծրագիր (էջ 137):

Մեր հայրենակիցների հեղինակած փաստաթղթերում և նյութերում բացահայտվում են համաժողովրդական շարժման պատճառները, էությունն ու բնույթը: Խոսվում է մեր խաղաղ պայքարի դրսևորումների ու եղանակների մասին: Այստեղ արժե հիշատակել Շինարարության նախարարության հաշվողական կենտրոնի կոլեկտիվի՝ ԽՄԿԿ կենտրոնական կոմիտեին, ԽՄԿԿ - Գերագույն խորհրդին, ԽՄԿԿ նախարարների խորհրդին ուղղված դիմումից մի հատված. «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների առնչությամբ կազմակերպված երևանյան խաղաղ ցույցերը մեր ազգի ինքնահաստատման, արժանապատվության ցայտուն դրսևորումն էին: Այդպես կվարվեր իրեն հարգող, իր ազգային արժանապատվությունը գիտակցող ամեն ազգ, անկախ փոքր և մեծ լինելուց: Այդ ցույցերի միանգամայն խաղաղ բնույթը, բարձր կարգապահությունը մեր բազմազգ երկրի բոլոր ժողովուրդներին ցույց տվեցին, թե ինչ ակունքից են սնունդ առել մեր արմատները: Երևանյան ցույցերը մեր ազգի բարոյական հաղթանակը եղան վանդալիզմի, բարբարոսության և կրոնական ֆանատիզմի դեմ» (էջ 55–56):

Մեր ազգի դիպուկ բնութագիրն է տալիս դիմումի հետևյալ հատվածը. «Ցույցերին հաջորդած Սումգայիթի դեպքերը ողջ աշխարհին մեկ անգամ ևս համոզեցին, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ ապրելով բարբարոսների հարևանությամբ, ցավոք՝ նաև նրանց տիրապետության տակ, երբեք չկորցրեց իր ազգային դեմքը, չդավաճանեց ստեղծագործելու, կառուցելու, արարելու, վերստեղծելու, խաղաղ ապրելու իր հավատամքին և եթե ստիպված է եղել սուր վերցնել, ապա միայն պաշտպանվելու բնական նպատակով» (էջ 56):

Մեջբերենք մեկ այլ հատված. «Ղարաբաղյան շարժումը ցույց տվեց, որ հայ ժողովուրդը կանգնած է ազգային վերածննդի շեմին: Ոչ մի դեպքում և ոչ մի կերպ չի կարելի խանգարել այդ շարժմանը: Շարժման մի քանի օրերի ընթացքում հայ ժողովուրդը և նրա երիտասարդությունը ստացավ ազգային արժանապատվության գիտակցման իսկական ինտերնացիոնալ համախմբվածության մի անկրկնելի դաս» (էջ 56):

Պայքարի բնութագրի տեսանկյունից հիշատակության արժանի է նաև Երևանում տեղի ունեցած հայ մայրերի և կանանց հանրահավաքի՝ ՀԽՍՀ - Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված բողոքի հետևյալ հատվածը. «Այս պայքարի ընթացքում մեր ազգը կարծեք սրբագրվել, դարձել է ավելի համախմբված, ավելի կիրթ ու բարոյական մի ժողովուրդ, որով հիացած է ողջ աշխարհը» (էջ 141):

Ժողովածուի մեջ ներառված փաստաթղթերում և նյութերում արտացոլված է հայության վերաբերմունքը «Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեների, նրանց դերի ու գործունեության, համաժողովրդական շարժման ղեկավարների ու ակտիվիստների նկատմամբ: Արտացոլված են նաև կոմիտեների հանդեպ իշխանությունների որդեգրած մոտեցումները: Իմանում ենք նաև, թե ինչպես է արձագանքել հայությունը «Ղարաբաղ» կոմիտեի անդամների և շարժման մյուս ակտիվիստների ձերբակալմանը:

Ժողովածուի մեջ ընդգրկված փաստաթղթերում և նյութերում տրվում են գնահատականներ ԽՍՀՄ կենտրոնական իշխանության կայացրած որոշումների ու կատարած քայլերի վերաբերյալ. տարբեր հաստատություններ իրենց վերաբերմունքն են արտահայտել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշման վերաբերյալ: Ժողովածուի հարապարակումներից իմանում ենք նաև հիմնախնդրի նկատմամբ Խորհրդային Հայաստանի իշխանությունների վերաբերմունքի մասին:

Փաստաթղթերի և նյութերի հեղինակներն իրենց անհամաձայնությունն են հայտնում կենտրոնական ԶԼՄ-ներով արված հայտարարությունների էության, այդ ԶԼՄ-ների հրամցրած սխալ տեղեկատվության և արած ոչ ճիշտ, վիրավորական, լայն հասարակությանն ապակողմնորոշող ձևակերպումների վերաբերյալ: Դատապարտվում են կենտրոնական հեռուստատեսության ու մամուլի միտումնավոր և աչառու դիրքորոշումները Ղարաբաղյան հարցի վերաբերյալ, նրանց հակահայ, ստահոդ գնահատականներն ու սադրիչ հաղորդագրությունները:

ԼՂԻՄ-ի անցյալի ու ներկայի, սումգայիթյան ողբերգության, Արցախյան հարցի նկատմամբ ԽՍՀՄ նախագահության վերաբերմունքի, մարզում ծավալվող իրադարձությունները ԶԼՄ-ների կողմից ներկայացնելու մասին

խոսվում է Լեռնային Ղարաբաղի բնակչության կողմից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորներին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանն ուղղված դիմումի մեջ (էջ 79–84):

Մեր հայրենակիցները պահանջում են պատժել սումգայիթյան ոճրագործության կազմակերպիչներին ու իրականացնողներին: Մերոնք ընդգծում են նախճիրի մեղավորներին պատժելու անհրաժեշտությունը: Պահանջում են նաև հայտնաբերել ու պատժել Հայաստանի բազմաթիվ աշխատավորական կոլեկտիվներում տեղի ունեցած թունավորման դեպքերի մեղավորներին:

Առաջ է քաշվում Հայոց ցեղասպանությունն ընդունելու հարցը:

Ժողովածուում տեղ են գտել նաև օտարազգիների հեղինակած փաստաթղթեր և նյութեր: Ուշագրավ է երաժշտագետ, ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ Մ. Պ. Պապուշի՝ ադրբեջանցի ժողովրդին ուղղված նամակը. «Դիմելով ձեզ՝ ես ուզում եմ խոսել, ցավով և կարեկցանքով, հենց ադրբեջանական ժողովրդի ողբերգության մասին»,– գրում է Պապուշը (էջ 112): «Սարսափեցնում է այն,– շարունակում է նա,– որ անցյալի սխալ քաղաքականությունը շարունակվում է ինչ-որ տարօրինակ իներցիայով: Ի՞նչն է խանգարում Լեռնային Ղարաբաղի բնակչության կամքին ընդառաջ գնալուն: Դրական ի՞նչ կարծիքներ կարող են բերվել հօգուտ Ադրբեջանի կազմում ԼՂԻՄ-ի բռնի պահմանը: Մի՞թե պետք է ադրբեջանցի ժողովրդին հայերի հատվածի հետ բռնի միավորումը՝ բացարձակ անհիմն, իր թիկունքում իսկական շարժիչ ուժեր չունեցող հակամարտության խորացման գնով: Մի՞թե արդյունավետ չէ բոլոր հարաբերություններում բարեկամությունը՝ հիմնված ազատության, իրավահավասարության և յուրաքանչյուր ազգի անկախ կամարտահայտման հարգանքի վրա:

Ես կարծում եմ, որ ինչպես մեր Հայրենիքի, այնպես էլ ամբողջ աշխարհի ազգերի աչքում Ադրբեջանի հեղինակությունը զգալիորեն կբարձրանար, եթե այն իր մեջ ուժ գտներ այդ զիջման համար: Դա կլիներ ոչ թե թուլության դրսևորում, այլ հենց ուժի, մարդասիրության, ճկունության, բարեփոխման պատրաստվածության, որն այնքան անհրաժեշտ է մեզ բոլորիս՝ և՛ռուսներիս, և՛ադրբեջանցիներիս, և՛հայերիս, և՛էստոնացիներիս, և՛տաջիկներիս, և՛ուզբեկներիս…» (էջ 112–113): Ցավոք, ադրբեջանցի ժողովուրդը չունի բավարար գիտակցական մակարդակ: Այն ոչ միայն դույզն-ինչ չկատարեց լայնախոհ երաժշտագետի պատգամ-ցանկությունը, որ նաև յուրաքանչյուր գիտակից մարդու պատգամ-ցանկությունն է նման խնդիրների հետ կապված, այլև շարունակում է իր հայատյաց կեցվածքը՝ հայատյացության մաղձը մայրական կաթի հետ մատաղ սերդի մեջ ներարկելով, հայասպան վախկոտ դահիճներին հերոսացնելով:

Բնականաբար ժողովածուում զետեղվել են Արցախյան շարժմանը վերաբերող կարևոր որոշումները՝ 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը (էջ 16), 1988 թ. հունիսի 15-ի Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը (էջ 98–99), 1988 թ. հուլիսի 12-ի ԼՂԻՄ Ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի 8-րդ նստաշրջանի որոշումը (էջ 109–110), 1989 թ. դեկտեմբերի 1-ի Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի որոշումը Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին (էջ 234):

Խնդրո առարկա ժողովածուն հասցեագրված է արցախյան ազատագրական պայքարի պատմությամբ հետաքրքրվող լայն հանրությանը, ունի ճանաչողական-սկզբնաղբյուրային արժեք: Այն ընթերցելիս մտովի տեղափոխվում ես ավելի քան քառորդ դար առաջ՝ Արցախյան շարժման տարիները, իմանում, թե մեր ժողովուրդը ինչ մտահոգություններ, պահանջներ, ակնկալիքներ, սպասելիքներ, մոտեցումներ ուներ հիմնախնդրի առնչությամբ: Ժողովածուում ներառված փաստաթղթերում և նյութերում արտացոլված են հայ ժողովրդի պայքարը, հասարակության տարբեր շերտերի վերաբերմունքը՝ հիմնախնդրի, ծավալվող իրադարձությունների նկատմամբ: Այդ փաստաթղթերն ու նյութերը կարող են նաև ապագա սերունդներին ազգային կարևոր խնդիրների նկատմամբ հանրության մտահոգ վերաբերմունքի և համախումբ մոտեցման օրինակ ծառայել:

Փաստաթղթերի ու նյութերի՝ ժամանակագրական կարգով ներկայացված լինելը որոշակի պատկերացում է տալիս շարժման ընթացքի, դեպքերի, իրադարձությունների հաջորդականության մասին. փաստորեն, սա մեր արդար պայքարի յուրօրինակ տարեգրություն է:

Շրջանառության մեջ դրված մեծաթիվ փաստաթղթերն ու նյութերը հաստատում են, որ Արցախը մայր Հայրենիքի հետ վերամիավորելու համար հայության պայքարը շարունակական և վճռական է եղել խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում և իր տրամաբանական հանգուցալուծումն է ստացել վերամիավորման մասին 1989 թ. դեկտեմբերի 1-ի պատմական որոշմամբ:

ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ